

ՄԻՍՍԿ ԅՍԿՈՒՄ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, «ՀԱՅԵՐԸ ԼԻՐԱՆԱՆԻ ՄԷՋ»,  
Հանրագիտարան Լիբանանահայ Գաղութի, Բ. Հատոր, 1920-1980  
Շրջան, Պէյրուսթ, 1981 (540 էջ), Գ. Հատոր, 1920-1980 Շրջան,  
Պէյրուսթ, 1981 (575 էջ) :

Լիբանանահայ դաղութի պատմութեան նուիրուած իր առա-  
ջին ընդարձակ ուսումնասիրութեան («Հայերը Լիբանանի Մէջ»  
Պատմութիւն Լիբանանահայ Գաղութի՝ Հնագոյն Գարիբէն Մինչեւ  
Ա. Ընդհ. Պատերազմիւն Վերջաւորութիւնը, Պէյրուսթ, 1951) հրա-  
տարակութենէն երեսուն տարիներ ետք, հեղինակը մէկ տարուան  
ընթացքին՝ յաջորդաբար հրատարակ կը դնէ երկու նոր հատորներ,  
սակայն այս անգամ նոր ենթախորագրով մը. «Հանրագիտարան  
Լիբանանահայ Գաղութի»: Եւ այս ենթախորագիրը ինքնին կը լու-  
ծէ բազմաթիւ հարցեր ու հարցադրումներ, եւ ընթերցողը կ'առաջ-  
նորդէ տարբեր ակնկալութիւններու եւ պահանջներու: Բ. հատորը  
նուիրուած է «Լիբանանահայ նորոգ դաղութի կազմաւորումին, զա-

նագան հաստատութիւններու՝ եկեղեցի, դպրոց, եւ այլն», իսկ Գ. հատորը՝ լիբանանահայ «կազմակերպութիւններու, մշակութային կեանքի» եւ Պէյրութի մէջ, եւ անկէ դուրս՝ Լիբանանի տարբեր շրջաններու հայկական կեանքին:

Եթէ նկատի ունենանք այն փաստը, որ երկու հատորները միատեղ կը հաշուեն աւելի քան հազար հարիւր էջ, ապա պարզ կը դառնայ որ Ս. Վարժապետեան անվերապահ հոգածութեամբ մէկտեղած է իր նիւթերը, զանոնք առանձին հատորներու մէջ ներկայացնելու համար ընթերցող լայն հասարակութեան: Գիտական աշխատանք մը ներկայացնելու մտահոգութիւնը չունի հեղինակը: Դժբախտաբար սակայն, հրատարակուած երկու հատորները չունին նաև «Տանրադիտարան»ի մը պահանջած դասակարգումն ու դասաւորումը, եթէ մինչև իսկ պահ մը մոռացութեան տանք նման հրատարակութիւններու համար նախապայման եղող որոշ մակարդակը:

Ս. Վարժապետեանի համար աղբիւր ծառայած են որոշ զբոյրոյցներ (լիբանանահայ ազգային կեանքը յուզող խնդիրներու համար), որոնք երբեմն ամբողջութեամբ վերահրատարակուած են իր մօտ, եւ օրաթերթերը՝ ազգային հաստատութիւններու, մշակութային ընկերակցութիւններու եւ դէմքերու համար: Ահա թէ ինչու այն թերին ու պակասը, որ յաճախ ակներախ է իր ներկայացուցած տեղեկութիւններուն մէջ: Մինչդեռ յաւելեալ փոքր ճիգ մը՝ ուղղակի ազբիւրներէն քաղելու փաստերն ու տուեալները, կրնար այնքան բան աւելցնել հրատարակուած հատորներու մակարդակին եւ արժէքին:

Այս բոլորով մէկտեղ՝ իրրեւ ուղեցոյց, իրապէս հետաքրքրական եւ օգտագործելի կը մնան յիշեալ երկու հատորները ապագայ այն մեծ աշխատանքին համար, որ օր մը պէտք է տարուի լիբանանահայ դպրութիւն ամբողջական պատմութիւնը տալու համար: